# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
## «ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament

13 օգոստոս 2019թ.

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Մեծարգո պարոն նախագահ.

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում «Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում է՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Կարինե Պողոսյան )

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքի լրացվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

Ազգային ժողովի պատգամավորներ՝

Կարինե Պողոսյան

Դավիթ Մանուկյան

Ջանիբեկ Հայրապետյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ Օրենք) 24-րդ հոդվածում լրացնել նոր 8.1-րդ մաս.

«8.1 Առաջին ծննդաբերության ժամանակ, երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխային տրվում է ծննդյան միանվագ տարբերակված նպաստ՝ երկրորդ երեխայի կարգաթվով սահմանված միանվագ նպաստի կրկնապատիկի չափով»:

**Հոդված 2.** Օրենքի 25-րդ հոդվածում լրացնել նոր 7.1-րդ մաս.

«7.1 Սույն օրենքի 24-րդ հոդվածի 8.1-րդ մասով սահմանված դեպքում՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխայի համար ծննդյան միանվագ տարբերակված նպաստը վճարվում է ուղղակի կարգով»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հիմնավորում**

Համաձայն գործող օրենքի և ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 6-ի N275-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում պետական բյուջեից հատկացվում է երկրորդ երեխայի ծննդյան կարգաթվին համապատասխան՝ 150 000-ական ՀՀ դրամ: Իրականություն է այն փաստը, որ առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ունենալու դեպքում՝ երեխաներին խնամելու և մեծացնելու հետ կապված ծախսերն էապես տարբեր են, քան օրինակ՝ մեկ երեխայից հետո երկրորդ երեխայի ծնվելը: Այսինքն՝ երկվորյակների համար՝ հագուստ, սնունդ և այլ անհրաժեշտ ապրանքներ ծնողները պետք է գնեն կրկնակի: Ըստ այդմ, հաշվի առնելով վերոնշյալը՝ ողջամիտ և արդարացի կլինի առաջարկվող օրենքի նախագծի ընդունումը, որի ազդեցության գնահատականը, միանշանակ, լինելու է դրական:

**Ակնկալվող արդյունքը**

Օրենքի ընդունումը հիմք է հանդիսանում ՀՀ քաղաքացիների՝ պետության նկատմամբ բարձր վստահության, սոցիալապես պաշտպանվածության համար: Այս կարգավորումը ևս մեկ դրական ազդեցություն կունենա և կնպաստի ծնելիության մակարդակի բարձրացմանը, որը բխում է երեխաների թվի աճի առաջընթացին ուղղված՝ պետության կողմից որդեգրած քաղաքականության տեսլականից:

**Տեղեկանք գործող օրենքի լրացվող հոդվածների վերաբերյալ**

**Հոդված 24. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը**

1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող): Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը, կամ ծնողը և նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում (եթե նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը): Օտարերկրյա քաղաքացի ծնողին երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողն առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, և օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել):

2. Երեխայից հրաժարվելու, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) տեղավորելու, երեխայի որդեգրվելու կամ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում երեխայի ծնողը կորցնում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը:

3. ***(մասն ուժը կորցրել է 01.12.14 ՀՕ-207-Ն)***

4. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը: Եթե ծնողը օտարերկրյա քաղաքացի է, ինչպես նաև, եթե ներկայացվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստը երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով վճարելու դիմում, և նոր ծնված երեխայի ծննդի պետականգրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, ապա երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել):

5. Նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու կարգը, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար մյուս երեխաներին և զավակներին հաշվի առնելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

7. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

8. Միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու դեպքում, եթե, նոր ծնված երեխաների հերթական կարգաթվերից կախված, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են երեխայի ծննդյան միանվագ նպաստի տարբերակված չափեր, ապա նոր ծնված յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով:

8.1 Առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխային տրվում է ծննդյան միանվագ տարբերակված նպաստ՝ երկրորդ երեխայի կարգաթվով սահմանված միանվագ նպաստի կրկնապատիկի չափով:

9. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարում է՝

1) երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարելու դեպքում.

1.1) երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում.

2) սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում:

***(24-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, խմբ., փոփ. 24.11.15 ՀՕ-144-Ն, լրաց., փոփ. 16.12.16 ՀՕ-223-Ն, խմբ. 06.12.17 ՀՕ-240-Ն)***

**Հոդված 25. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելը և վճարելը**

1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու (երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու) համար տարածքային կենտրոն են ներկայացվում դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը:

2. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (այդ թվում՝ երեխայի կարգաթիվը որոշելու համար անհրաժեշտ) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս նոր ծնված երեխայի, նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների բնակության (հաշվառման) վայրը որոշվում է բնակչության պետականռեգիստրում առկա տվյալների հիման վրա:

4. Տարածքային կենտրոնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում՝ նշանակել երեխայի ծննդյան միանվագ նպաստ կամ մերժել նպաստի նշանակումը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցվում է դիմողը:

5. Տարածքային կենտրոնը մերժում է նպաստ նշանակելը, եթե նոր ծնված երեխայի ծնողը չունի երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք, կամ դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):

6. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում նոր ծնված երեխայի, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաներին՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն (մանկատուն) տեղավորելու կամ այդ երեխաների՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու, այլ անձի կողմից որդեգրվելու դեպքում վճարված նպաստը ենթակա է բռնագանձման նպաստը ստացողից, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի:

7. Երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում (եթե երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով) երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը վճարվում է սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ընտանեկան դրամագլխի սպասարկման պայմանագիր կնքած բանկում նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին

(այսուհետ՝ պետականաջակցության հաշիվ) մուտքագրելու միջոցով: Ընտանեկան դրամագլխի սպասարկման պայմանագրի օրինակելի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.1 Սույն օրենքի 24-րդ հոդվածի 8.1-րդ մասով սահմանված դեպքում՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխայի համար ծննդյան միանվագ տարբերակված նպաստը վճարվում է ուղղակի կարգով:

8. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: